

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՄՕԹԻԱԾՈՒԹԻՒՆ.

(ՅԵՍՈՒՍ ՍԵՐԱՎ ԵՒ, 4—6)

Առառ ած, իմ կեանքիո պատճառն ու ալրը, աչքիս արատութիւնից ինձ հեռու պահիր ու ամենայն չոր ցանկութիւնից ազատ մնամ։ Մի թողնիլ, որ ճանապարհից գուրս գամ, անարատ կեանքից հեռանամ և անամօթ սրտից ինձ պահի՛ր։

Քո մասին պիտի խօսիմ, ով ամօթխածութիւն, որ առաքինութիւնների մէջ ամենահրապուրիչն ես, ամենայն առաքինութիւնների զարգարանքն, հովանաւուրողն ու պաշտպանն ես։ Որ հոմեսութեան քոյրն ես և հեղութեան ու խոնարհութեան մայրն։

Մոլութիւնն էլ ունի իւր զարգարանքն, որով ճոխանումէ և գեղեցիկ երեւում, մեր աչքն իրան քաշում, մեր զգացմունքներն հրապուրում։ Եթէ այդ արտաքին հաճոյական և ցանկալի երեւոյթը չունենար, ով կը լինէր, որ մեղքը սիրի, որ և իցէ յանցանք գործի, զօրուոր և անդիմազբելի կերպով հրապուրուելով ու խաբուելով, որով մարդուս աչքը մութ է կոխում և մոռանումէ որ մեղքն իւր գեղեցիկ ու հաճոյական հրապոյըներովը զրաւելով։ Իրան համեցէք է անում խմելու թոյն՝ ոսկեղօծած բաժակների մէջ։ Բայց առաքինութիւնը բացի իւր յատուկ գեղեցկութիւնից՝ ուրիշ ոչ մի հրապուրիչ ու զրաւիչ բան չունի, հաւանուելու համար, առաքինութեան այդ գեղեցկութիւնը նոր չէ ստեղծվում, այլ միայն առուել ևս աւելանումէ այն քօլովն, որ ամօթխածութիւնը նորա վերայ քցումէ։

Արդէն ի բնէ ամեն մի մարդու սրտի մէջ զրած, կամ այսովէս սուեմ, անկոծ է այն զգացմունքն, որով նա հասկանումէ թէ ինչն է վայելու բանն։ Այդ զգացմունքը միայն լաւ դաստիարակութեան գործ չէ։ ամենարիտ վայրենի մարդն անգամ, որ անապատ տեղ է կեանքն անցկացնում, մարդութիւնից զուրկ բարբարուն անգամ՝ քաշվումէ՝ հրապարակաւ՝ ու՝ մարդոց առաջ մի անվայել բան անելուց։

Դաստիարակութիւնը չէ կարող վայելուց բանի զգացմունքը մարդուս փոքր հասակի մէջ եղած ժամանակն նոր սանդեել, առ միայն կերպաւորել, յառաջ տանել ու զարգացնել ու նորան ընկերական կեանքի մէջ աւելի որոշ ուղղութիւն տալ:

Ուստի իրօք աւելի մեծ աշխատութիւն պէտք է՝ վայելուց բանի համար մեր ունեցած այս ընատնին զգացմունքը մեր մէջը խեղղելու, քան թէ զարթնեցնելու: Արդէն մի գարշելի վարժութիւն պէտք է, որ անվայել բանից կարմրելը մոռանայ մորդ և զգուելի բանն առանց քաշուելու անելն իւր համար սովորութիւն շինի: Որքան էլ որ փշացած լինի մարդս, բայց և այնպէս շատ անգամ, աեզը որ գայ, երեսը պէտք է կտրմի: Պատճառ որ ամօթխածութիւնը՝ մեր ներական դադասոցի, ուզումեմ ասել, մեր խղճմտանքի քոյրն է:

Ամօթխածութիւնը զարթնումէ անմեղ մանուկների մէջ վայելուց բանի մի կատարեալ ուսում ստանալուց առաջ: Երանի նորան, ով որ մի երեխայի նման այս գեղեցիկ մանկական սիրոն ու զգացմունքը պահած կը լինի մինչեւ իւր իւրին ծերութեան հասակն: Նա միշտ սիրելի կը լինի իւր ունեցած այսպիսի սիրուելու և որտանց յարգուելու արժանի զգացմունքով: Վարդաս մոքոր սրտի և անարատ հոգւոյ տէր լինելն ինչ հասակի և ինչ սեռից ուզումէ լինի, երեխայ՝ թէ օրիորդ, պատանի՝ թէ ոյր մարդ, ծերունի՝ թէ տանտիկին, թէ հասակն առած ոյրի՝ այնպիսի մի կախարդիչ գեղեցիկութիւն է տալի նորան, որ անդիմազրելի կերպով գրաւում, գերումէ: Քնքոյշ և ազնիւ զգացմունքն ամեն մի հասակի մէջ եղած մարդուն տալիս է իւր տեղի բարձր արժանաւորութիւնն:

Ամօթխածութեան հակառակ զգացմունքն՝ անաճնունինն է ու լընունինն: այս այնպիսի մի զգացմունք է, որ կէն է գնում նուրբ և ազնիւ կերպով մծացացած մարդոց արած կամ անելու ամենայն գատաղութիւնն: այս այնպիսի մի ոսոր և բոլորափին բթացած ու այլանգամակուած զգացմունք է, որ արհամարհումէ բարեկայելուց բանն, ծաղրումէ աստուածոյին օրէնք, որ մեր սրտի մէջ կայ:

Անամօթութիւնը կարող չէ տեղի ունենալ առանց կարելամենաքոյշ արմատից բարոյական զգացմունք, որ մորգուս մէջ կայ առանց ջնջելու մեր սրտից առաքինութեան զգացմունքը: Անամօթութիւնը կարող է տեղի ունենալ այն ժամանակի, երբ որ

առաջ կծռուին մարդկային արժանաւորութեան վերայ մեր ունեցած ամենայն գաղափարները։ Երբ որ մարդո այդ սարսափելի վիճակին է հասնում, ամօթ ու պատկառանքը կորցնելով, այժամանակ գարշելի բանը նորա համար զրաւիչ է լինում, անվայել ու անպատկան բանը՝ հաճելի, անբնականը՝ բնական, պարկեշտութիւնն՝ արուեստակեալ մի բան, անամօթութիւնը՝ նախապաշարմունք։

Պատիւ ամօթ ճանաչող մարդոց խօսքին չէ լսում, այլ վչացած մարդոց գիւր եկող ու հաւան կացող լիրը ծիծաղին է մտիկ տալի. չէ ականչ անում իւր խոկ սեպհական համոզման վայելոց բանն անել յորդորող ձայնին, այլ համարումէ այդ ձայնն երեխայական յիմարութեան ձայն։

Թեթեամառնթիւնը նորա հայրն է, խոկ զգայական ցանկութիւնը՝ մայրն։ Դիւր գալու համար ամօթ ու պատկառանքը բոլորովին մէկ կողմն է գնում ու յանդուգն աներեսութիւնով բաց անում իւր մերկութիւնը։ Յրախօսենախապաշտմունքից բարձրերեւելու համար, խաղ անելու նման բան է համարում իւր համար անպարկեշտ խօսքեր բերնից հանելն, անբարոյական, անհամեստ շարժմունքներ անելն. ամենի ին չէ քաշվում զգուելի երկնոի բառեր բանեցնելուց խօսուկդութեան մէջ. շատ գոչ և որախ է լինում, երբ որ իւր այգովիսի գարշելի խօսքերն իրան նմանների մէջ իրինջոցի պէս ծիծաղ է բարձրացնում։ Իւր սմամօթութեան վերայ պարծենումէ և իւր արած վաստ բանովը փառաւորվումէ մի քաջ մարդու նման որ պատերազմի մէջ մէջ յաղթութիւն է անում։ Բայց և այնպէս մինչեւ անգամ սաստիկ փչացած մարդոց վերայ ևս մեծ զօրութիւն և ոյժ ունի ընածին պատկառանքն առաքինութեան առաջ։ Միայն անպատկառների մէջ համարձակվումէ անպատկառ լինել. բայց ամօթ ու պատկառանք ունեցող մարդոց առաջն անամօթ մարդն պարտը վումէ, ինքն իրան այնպէս պահում, որ գոնէ սղարկեշտ ելլէ։ Անամօթ մարդը կկեղծաւորուի էլ իրան լաւ ցոյց տալով, որ սլարկեշտ մարդոց մէջ լինել ու ասլրել կորողանայ. խոկ եթէ նա իւր անամօթութիւնը թողնել ու փոխուել չկարողանայ, հասարակութիւնը նորան՝ իրեւ անտանելի գարշելի մարդ իւր մէջից կհանի դուրս կքցի։

Կնչպէս երեսին մասիկ տալու չէ այն անամօթ պատանին, որոց

լարքն իրան մատնումէ, որ նու վաղուց իւր անմեղութիւնից հեռացել է, վիճացել է ու վատ գործի գերի՛ է։ Խնչպէս զղուելի է տարիքն առած մարդու որ իւր անպարկեշտ խօսակցութեան ձեւերովն վորքահասակ, միամիտ ու անմեղ տղին ամօթու կարմրացնումէ և ուրախանում, որ կարողացաւ նորա և ուրիշների քընչքոյշ զգացմունքին դիպչել։ Խնչպէս արհամարհելի է մանաւանդայն կնիկն, որ իւր աչք ունքովն ու շարժուածքովն ցոյց է տալի, թէ պատրաստ է ուրիշ տղամարդոց անպարկեշտ ցանկութիւնն ներին որսը լինել ու աւար գնալ։ Բնութիւնն, այսինքն է՝ Աստուծոյ աջն տղամարդիկներից շատ աւելի պինդ է կնանիքի մէջքն կապել բարոյականութեան և սլատուաւորութեան թանկագին գոտիով։ Եթէ որ բարոյականութեան այս կամարը մի փոքր էլ որ թուլանայ և այնպէս պատահի, որ մի քիչ բացուի ու մի փոքրիկ ճեղքուած երեւեցնի, ինչպէս որ մի կամարակապ շէնքի մէջ, այն ժամանակ չար կըքի կատաղի հոսանքի առաջն առնել էլ ոչ որ չկարողանալ։ Սորա համար անհերքելի է մնում այն փորձած խօսքը թէ՝ մարդկային սեռի մէջ բարոյական կինը ամենազնիւ բացուած ծաղիկն է։ բայց և ոչ ոք չէ կարող այնպէս սաստիկ պատուից ընկնել, քան թէ անբարոյական կինը։

Եւ ի՞նչպէս կարելի է, որ մի աղջիկ դէն քցի իրան անպէտք մի բանի նման՝ այն ամենազեղեցիկ զարդարանք, որով իւր աղքատութեան մէջն էլ գրաւիչ ու սիրելի է երեւում։ Խնչպէս կարելի է, որ մի կին ինքն իրանից գողանալով՝ զրկի իրան այն իւր բաղդաւորութիւնից, որ իւր պատիւր ոլաշտպանող զէնքն է։

Այսպիսի մի թանկագին բան, որ ամեն մի մարդու համար մեծ նշանակութիւն ունի, քրիստոնէի համար աւելի ես մեծ արժէք պէտք է ունենայ, որովհետեւ իւր սրտի մաքրութիւնից ու ազնուութիւնից աւելի մեծ, աւելի տեղական, աւելի երջանկացնող բարիք չէ ճանաչում։

Ամօթխածութեան ամենալուսնգաւոր թշնամին՝ աւելի կանց սեռի մէջ՝ այն չափից դուրս գիւր գալու ցանկութիւնն է, որոյ համար խելքները տանել են տալի, ամենայն կերպ աշխատելով, որ շնորհքով, սիրուն երեւեն՝ որ իրանց հաւաննեն։ Եւ աւելի աւելի նորածեութեան (մօդայի) ետևից ընկնելն է, որոյ համար ներելի է համարվում մարդուս շատ վատ թաւող անհաշիւ ու անկարգ սխալներ անելն և շատ անգամ ծիծաղելի հա-

գուստն էլ իբրև անպատճառ հարկաւոր ու շատ վայելուչ ընդունվում :

Կինն, որ Աստուածանից աւելի քնքոյշ և աւելի գրաւիչ կերպով է ստեղծուել, քան թէ այր մարդն, որին բաժին է ընկել արտաքին կեանքի աւելի ծանր ու դժուարին բեռը տանել ու աւելի մեծ նեղութիւնները քաշել, կինն, ասումեմ, աւելի նուրբ զգացմունք էլ ունի բարեվայելուչ ու ամօթ չըերող բանի համար, քան թէ այր մարդն։ Կինն, որ իւր կակուղ ընաւորութեամբն ընտրուած է այր մարդու խստութիւնն իւր հեղութեամբն ամոքելով կառավարելու, նորան կապելու այն բանին՝ ինչ որ գեղեցիկ է ու բարի, սորա համար կին՝ թէ աղջիկ ասածդ վերին աստիճանի ամօթխածութեան զգացումն ունին։ Բայց այն կինն՝, որ այդ քնքոյշ զգացումը կորցրել է, ու էլ վախ չունի մի անմաքուր գործից, թող թէ մի անմաքուր մտքից, բոլորովին կորցնումէ իւր պատիւն և անարգ մի արարած է համարվում իւր իսկ սեռի մէջ, իսկ այր մարդոց սաստիկ արհամարհանացն է արժանանում։ Նա իւր ամենաազնիւ կոչմանը գէմ մեղանչել է, եթէ իւր արատաւոր կեանքի մէջ մարմնոյ գեղեցկութիւնն էլ որ կորցրած լինի, բայց և այնպէս նա դադարել է իւր սրտի և հոգւոյ ազնուութիւնովը սիրուն ու գրաւիչ լինելուց։ Անառակ մարդու տգեղ ցանկութիւնը կշարժի, բայց մի ազնիւ զգացմանց տէր մարդու սիրտն՝ էլ չէ կարող շարժել։ Նա ինքն իրան դուրս է քցել արժանաւոր կանաց կարգից, սորա համար ամենայն իրաւունքով ատելի ու արհամարհելի է դարձել ամեն լաւ վարքի տէր այր մարդկանց ու կանանց։

Ամեն բան, ինչ որ մեր զգայականութեանն ու նորանից յառաջեկած մեղսական հակումներին մեծ կշիռ է տալի, Քրիստոսի մեզ աւանդած ուսմանը հակառակ է։ Սորա համար պարտականութիւնն է Քրիստոսի աշակերտի, որոյ համար Աստուած ու յաւիտենական կեանք գեռ ևս իրանց նշանակութիւնն ունին, բարոյական անկարգութեան ամենափոքրիկ առիթն անգամ իրանից հեռացնել։

« Ոչ թէ արտաքին զարդարանքն, մաղերի հիւսուածները, սոկիների շարքերն ու հագուստներ հագնելու կերպն, այլ սրտի անեղծութիւնը, հեզ ու հանդարտ հոգին է պաառակա՛ն Աստուծոյ առաջնորդութեան ամենափոքրիկ առիթն անգամ իրանից հեռացնել։ (Ա. Պետ. Գ. Յ, 4.)։

Սուրբ Աւետարանը չէ արգելում մեզ երկրաւորն էլ զարդարել։ Դրսի գեղեցկութիւնով մարդու աննշմարելի կերպով առաջնորդվումէ Հասնելու ներսի գեղեցկութեան, այսինքն է՝ սիրելու այն ինչ որ իւր գործերի մէջ ազնիւ ու արդար է, և ինչ որ հեզութիւնով է արել։ Բայց Քրիստոսի կրօն արգելումէ մեզ այն, ինչ որ Հազնուելու զարդարուելու կերպովը մեր զգացմունք գրգռումէ զէպի անպարկեշտ բանը։

Հագուստի, նորաձեռութեան մէջ տիրող սովորութիւնը կարող է միշտ անխելք սխալմունքների մէջ էլ քցել, որոնք մարդուս աւելի տգեղացնումեն։ Քան թէ գեղեցկութիւնն աւելացնում, Բայց նոր ձեռով Հազնուելու կապուելու, սանտրուելու կերպը՝ անդադար փոխուելովն՝ մեր անելու սխալների մեծ մասը մինչեւ անգամ անվնաս է անցկացնում, պատճառ որ շատերը քիչ օրուայ մէջ անխելք ու ամենեւին չհաւանելու բան են Համարում այն, ինչի վերայ որ մի քանի շաբաթ առաջ սաստիկ հաւանելով ու զարմանալով էին մտիկ տալի։ Մինչեւ անգամ կարելի է ասել թէ՝ պարտականութիւն պիտի Համարենք մեզ՝ որ քաղաքական ընկերութեան կամ Հասարակութեան մէջ, մեր խելքին միայն հաւանելով, չհեռանանք եղած սովորութիւնից և գործածուած ձեխց չզանազանենք տարբեր ձեւ ունեցող մեր Հագուստովն։ Խելօքութիւնն այն է, որ դրսից ուրիշների աչքին ընկնենք ու մեզ այնպէս ցոյց չտանք, որ չենք ուզում նորանց սովորութիւններին հետեւել։ Բայց Հագուստն ամեն ժամանակ էլ սկիտի լինի պարկեշտութեան ու բարեկրթութեան պատկեր։

Եթէ որ նորասիրութիւնն Հագուստների ու զարդարանքի կողմանէ անվայելուչ բանն էլ վայելուչ և ընդունելի Համարի։ Եթէ որ կանանց մէջ ամենապարկեշտներն անգամ, թէեւ իրանց մըտքից վատ բան անց չկացնելով, նորաձեւ Հագուստներ Հազնելու կողմանէ յետ չմնալով, հետեւեն իրանց առաջ ընկնող քոյրերին, որոնք զեղիս Հագուստներով զարդարուելով, իրանց մարմնոյ գեղեցկութիւնովն ուրիշներին հրապուրիչ կերպով երեւել են մտածում, այսպիսի անպարկեշտութիւնը միշտ իբրև մի քիծ կմնայ կանանց սլատուոյ վերայ։ Ընդհանրացած սովորութիւնն անգամ չէ կարող ջնջել մեր սրտից ոլարկեշտութեան այս մաքուր պատուիրանն, որ սրտի պատուիրան է։

Ամենաթեթև կերպով անգամ դիպէելն անմեղութեան, նորա

սահմանից մազաչափ դուրս գալով, սրբապղծութիւն է։ Աննշմարելի կերպով մի քայլ որ ոտներս դուրս ենք դնում պարկեշտութեան ճանապարհից, իսկոյն միւս քայլն էլ ետևիցն ենք անում։ Այն կինն, որ ունայնասէր թեթևութիւնով աշխատումէ հրապուրիչ կերպով զարդարուած այր մարդոց առաջը դուրս գալ, որ աչքի ընկնի ու դիւր գայ, իրաւունք է տալի նորանց իւր վերայ խիստ դատողութիւններ անելու. փշացած մարդոցն էլ, կարծես, հրաւիրումէ, որ իւր վերայ նայեն իբրև մի փշացած կնոջ վերայ։ Այդպիսի կինը թունաւորումէ իւր արտաքին երեսոյթի զեղխութիւնովն անմեղների, կամ իրանց մաքից չար բան անց չկացնողների սիրոն ու ծնումէ ուրիշի անկումն ու կորուսոր, որուն պատճառ ու մասնակից լինելը իւր կողմից չէ կարծում։

Բայց ոչ միայն անսպիտան նորածեւութեան խելքը միտքը տալն է պարկեշտութիւնը մեռցնող մեր մէջն, այլ և ուրախութեան անելն, երբ ոչ ուրախ ժամանակ անց կացնելն լո՞ւ ու առհճանից դուր է գալ ու առնչարջականութեան է գնում։

Այս պատճառով պատուաւոր մարդիկ իրանց զուարճութեանց տեսակն ընտրելու մէջ զգոյշ են։ Բարի հրեշտակը լաց է լինում՝ մեզ վերայ, երբ որ մեր սիրոն իրան տալիս է՝ առանց մոտածելու թեթևամիտ զուարճութիւնների վերայ։ Ոչ թէ տիրութիւնն ու յուսահատութիւնն, ոչ թէ թշուառութիւնն ու աղքատութիւնն են անմեղութեան այնքան ամենավտանգաւոր թշնամին, որը առ ուրախութիւնն և զուարճութիւնն, երբ որ մեր բոլոր զգացմունքներն արբեցնումէ, չափ ու սահմանից հանում և մեր խելքը կորցնել տալի։ Այն տեղ, ուր չափազանցութեան հասած ուրախութեան մէջ փաղաքշանքն ու քծնելը մեր ունայնասիրութիւնը շարժումէ, ուր որ չափից դուրս կերուխումը մեր գլուխը տաքացնումէ ու մեր զգացմունքը վերին աստիճանի լուրում և մեր զգայականութեանը լիակատար իշխանութիւն տրվում, այնտեղ անհետանումեն շատ անգամ՝ մեր կեանքի ամենասուրբ կանոնները, ամենահաստատ բարոյական սկզբունքներն ու ամենաաղնիւ խօսքն, որ ինքներս մեզ տուած ենք մեր վարքի ու բարքի մասին՝ իբրև մի ուխտ, որ արած ենք և պիտի կատարենք միշտ ամենայն սրբութեամբ։ Այդպիսի բոլէներում մարդս իրան ներումէ ու թոյլ տալիս ամենայն հեշտառութեամբ անել այն բանն, ինչից որ ուրիշ որ և իցէ ժամանակ զգուանքով երեսը սկիտի շաւու տար և

վերջին աստիճանի ցած բան պիտի համարէք: Քիչ է պատահել, որ շատ շատ մարդկակ անուանձ ուրախութեան մէջ իրանք իրանց կորցնելուց ու իրանց չափից դուրս գալուց յետոյ սաստիկ զըդ-ջացել են ու դառն արտասուք թափել:

Մարդուս հոգին այդպիսի տեղ ինչպէս հեշտ կորցրել է իւր մաքրութիւնն, ինչպէս պատահել է շատ անգամ, որ սաստիկ յուզուած զգայականութիւնից, անմեղութիւնը կորցրել է իւր անգնահատելի արժանաւորութիւնն:

Ոչ թէ ուրախ ժամանակ անցկացնելն է հակառակ ճշմարիտ քրիստոնէական զգացմանց, այլ զգայականութեան կատաղի բերմանն անձնատուր լինելն՝ աչքը մութ կոխած: Առոքինութիւնն արգելումէ մեզ՝ ոչ թէ պար գալը, կամ ուրախութեան մէջ իրմել մէկի ձեռքով մեզ առաջարկած մի բաժակ գինին, այլ՝ ուրախութիւն անելու ժամանակն՝ ինքն իրան այնտեղը հասցնելն, որ ոչ ինքն իւր պատիւը պահի, ոչ էլ ուրիշներից պահանջել կարողանայ, որ պատիւը ոլոչեն: Միանգամ որ մեզ տինքան տեղը կորցրեցինք, որ էլ մտիկ չոռուինք թէ՝ ինչն է վայելուչն ու ինչն անվայել բանն և ամօթիածութեան ու պարկեշտութեան սահմանից դուրս եկանք, վիրաւորելով ու փչացնելով այդ մեր ազնիւ զգացմունքն. — պաշտպանուելու էլ ի՞նչ զէնք կունենայ այնուհետեւ անմեղութիւնն:

Կարելի է, որ այդպիսի դէպքերում դեռ ևս ամենեին պատահած չէ քեզ, որ մեղքի մէջ ընկնես, բայց անխոհեմ, վարուելուդ համար ինքդ քեզանից դժգոհ լինելդ, տարիներ անց կըկենայ, բայց էլի քեզ կտանջի: Դու կզգաս, որ մի մարգարիտ քո վրայից ընկաւ, կորաւ, ու նորա նմանը մէկ էլ դոնել, գնել երբէք չես կարող:

Սույտ համար ոլէադ է արեւուն իւնաս ու հոկտ ին+դ + վլըայ ա-էլի այն ժամանակն, երբ ոչ ընկերական զ-արժու-նեան մէջոցին ուրախութեան անելն այնպատէ մէզ բաւացնումէ, ոչ ին+ներս մէզ սկսու-մէն+ կոչ-նել, +իւ է հու-մ, ոչ իւլու, ամօն, պատիւ-մէկ իողմը դնեն+ ու մէզ ան-սանչ կամ+ին հետեւն+։ ահա այդպէզ ոլէադ է շատ դժոյլ հուն+։ ու վլէաւ զ-արժու-նե-ից արդէն բարձրումն+ ու աղաւնումէ նա բա-ցանչակառէն իշխել մէր գիտակցունեան վլըայ: Ոչ մի ժամանակ այն-պէս խիստ պէտք է շինիս ինքդ դէպի քեզ, քան թէ այն միջո-ցին, երբ որ գրգռող հանգամանքներն ամեն կողմից սաստիկ կեր-

պով ներգործումեն քո զգայտկանութեանդ վերայ ու սպառնումեն քո սրտումդ փոթոքիկ հանել ու զգացմունքներդ տակն ու վերայ անել։ Մահկանացու մարդս շատ թոյլ է այն ժամանակն միայն, եթե որ աշխարհումս ամենայն ինչ իւր աչքին վարդագոյն է երեւում։ Զախորդութիւնը մեզ առաւելապէս Աստուծոյ է մօտեցնում, մինչդեռ ուրախութիւնը շատ անգամ ամենից աւելի հեռացնում նորանից։

Անբարյական ճարդոց հետ նորել՝ վեց կենալ ամօնիաժանեան կացնագու է, որովհետեւ մեր երեսից տանումէ բոլորովին ամօթն ու պատկառանքը, մեռցնում մեր սրտի մէջ պարկեշտութեան ըզգացմունքը։ Նատ օրինակներ տեսնելով անպարկեշտ ու անպատկառ մարդիկներից, անպատշաճ խօսքը՝ կամ գործն էլ մեզ այնչափ թուելի չի լինում, սովորական բան է գառնում մեզ համար և այդպէսով մեր քնքոյշ զգացմունքը բթանում։ Նատ քիչ կողատահի, կամ աւելի լաւ է, որ ասենք թէ՛ ընաւ կարելի բան չէ, որ ամենեւին չփշացած մարդը – , ինչ հասակի ու սեռի էլ լինի, զուարձութիւն գտնի նիստ ու կաց անելուց այնպիսի մարդոց հետ, որոնք պատիւ ու պատկառանք ասած բանիդ վերայ արհամարհանքով են մասիկ տալիս ու տնազ անելով ծիծաղում։ Եւ եթէ սոխուղուած է նա այդպիսիների հետ ապրել, երկար ժամանակ նորանց անամօթութիւնն իրան սասակի ընդգէմ կթուի։ Բայց ո՞րչափ երկար կքաշի։

Նատ անգամ մի անտեղի ու սուտ հպարտութիւն է գալի նաև ազնիւ մտածող մարդու լիրայ, նորան ճամբիցը հանումէ ու դըրդում, որ անվայել կատակներ ու զգուելի սրախօսութիւններ ինքն էլ անիւ. Հօ կնիկ չէ, մարդ է, ասումէ ինքնիրան։ Այս ծուռ ու կեղծ հպարտութիւնը նորա մէջ զօրանումէ ու իւր լաւ զգացմունքին յաղթում։ Նա չէ ուզում անարգ մարդկանցից յետ մնալ, որ իրանից գերազանց են երեւում իրանց անպատկառ ու երկու մաքի սուր խօսքերով։ Նա չէ ուզում տանել ծաղրն այն անամօթ ու անպատիւ մարդոց, որոնց մարդատեղ չէ դնում։ Նա նորանց ասած լիրը խօսքերի տակը չէ ուզում մնալ, ինքն էլ կեղծումէ նոյնն. և այսպէս ինչ որ ասում այն էլ լսում. դեռ նա ուզումէ, որ նորանց անպատկառ ու անմիտ խօսքերից աւելի լաւերն ասի իրանց։ Եւ այն, ինչ որ առաջն իրան ամենեւին դիւր չէր գալի, կամաց կամաց իւր համար սովորութիւն է դառնում։

ինչ որ առաջ կեղծումէր, բնութիւն է դառնում:

Այս տեսակ թեթևամտութիւն են անում մանաւանդ պատահներն, որոնք որ զգումեն թէ՝ իրանց ոյժն ուրիշներից սլակած է որոնք որ աշխարհք են դուրս գալի զեռ հասաատ սկզբունք չունենալով թէ՝ ինչ ճանապարհ պիտի ընտրեն իրանց կեանքի մէջ; Բայց նորանց կողմից շատ անմիտ պատուասիրութեան ըզգացմունք է, որ ուզումեն ցոյց տալ թէ՝ իրանց պատուին կազել չեն թողնիլ, որովհետեւ այդպիսի անխելք պատուասիրութիւնը այն տեղն է տանում նորանց, որ ամօթը դէն դնելովն, իրանց բարքը փչացնումեն, իրանց կապը կտրում, իրանց մարմինը թուլացնում, իրանց պատուական անունն ոտնակոխ անում, շատ անգտմ իրանք իրանց խայտառակում իրանց բոլոր կեանքի մէջը:

Ով որ ամօթխածութիւնն՝ այս կախարդիչ առաքինութիւնը կորցրեց, փորձութեան ժամերումն ամեն մի յանցանք գործելու ընդունակ է: Անմեղութեան պաշտպան սուրբ և ամուր ամբարտակը խախտուած է. հոգուց խլուած է իւր ամենազօրաւոր զէնքը չարը գործելու հրապոյրի դէմ: Այն ժամանակն որ տեղից պէտք է գտնենք այն յորդորողն ու խրատողն, որ մեզ համոզելով ըռնի, յետ քաշի ու չըթողնի, որ խելքներս կորցրած վազենք ու ընկնենք կորստեան խորխորատը:

Աւրեմն ինձ համար միշտ սուրբ, միշտ սկաշտելի լինի ազնիւ հոգացողութիւնս իմ պատուիս համար. միշտ սուրբ, միշտ պաշտելի լինի դժկամակող պատուական զգացմունքս այն ամենայն բանի դէմ, որ կարող է ինձ առաքինութիւնից հեռացնել: Ով ամօթխածութիւն, դիւթիշ առաքինութիւն, երբէք իմ սրտից դուրս չգնաս. մինչեւ իմ գերեզման մտնելս իմ հոգուս մաքրութեան պահապանն, իմ սրտիս խաղաղութեան վահանն լինիս:

Եւ Դու, երկնաւոր Հայր, որ այս քնքոյշ զգացմունքն իմ սըրտիս մէջը դրել ես, միշտ կենդանի և վառ պահիր իմ մէջս: Ես ինձ այնպէս կպահեմ, որ ինձ համար աններելի համարեմ՝ կամ մոքիցս այնպիսի բան անցկացնել, կամ սրտիս թոյլ տալ այնպիսի մի զգացմունք, կամ մի այնպիսի հակումն ունենալ, որ դէպի ի քեզ նայելու ժամանակն իմ վերայ սարսափ ու գող քցի: Թէե մարդիկ չգիտեն էլ թէ իմ սրտիս խորքումն ինչ է անց կենում. բայց Դու՝ ամենագէտ Տէ՛ր, Դու որ իմ երեակայած բաների գաղտնիքն էլ տեսնումես. ինչո՞ւ Քո առաջդ պէտք է զեղ-

նէի այնպէս, իբր թէ մութ գիշեր ու սև գերեզման է ծածկում
ինձ: Ո՞րտեղ թագնուիմ, որ Դու ինձ չտեսնես: Միթէ մարդուս
մոքից անցկացած բանն էլ արդէն գործ չէ, որ կարող է կատա-
րուիլ: Միթէ մեր նուիրական անմեղութեան թանկագին մար-
գարիսն իւր արժէքն չէ՝ կորցնում, երբ որ մեր սրտում շար-
ժումեն այնպիսի անմաքուր ցանկութիւններ, որ բերան բերելն
չենք կարող ոչ մի ժամանակ:

Սուրբ Աստուած մի տանիր ինձի դէպի փորձութիւն, այլ վրկիր
ինձ չարից:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՀԱՅՈՍՏԱՆԵԱՑՅՈ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շահանակ. Արարագ, 1885 թ. է.)

ԳԼ. ԺՊ.

Ս. Երուսաղէմի պատրիարքութիւնը սկսեալ Յակովը Տեառն
եղբօրից շարունակվումէր. պատրիարքը անխափիր իշխումէր տեղ-
ւոյն բոլոր քրիստոնէից մինչեւ Քաղկեդօնի ժողովի յուզումները
և մինչեւ որ երկարնակութեան ու միաբնակութեան խնդիրը երկ-
պառակելով քրիստոնէական եկեղեցու միութիւնը՝ յառաջացրեց
այն հանգամանքը, որ Երուսաղէմայ յոյն եկեղեցին ևս ընդունելով
Քաղկեդօնի ժողովը՝ սկսեց նեղել միւս քրիստոնէից՝ ընդ որս և
Հայերին, ուստի և հայք, յարմար առիթ ունելով Երուսաղէմի
դուրս գալը Յունաց կայսերութիւնից և ընդ իշխանութեամբ
մահմետականաց նուաճուիլը, 637 թուին Երուսաղէմայ նուաճող
էօմէր Խաղդաբայի թոյլտուութեամբ ոմն Արքահամ եպիսկո-
պոսի կարգեցին Հայոց առանձին պատրիարք անկախ միւս պատ-
րիարքներից, և Հայոց պատրիարքի իրաւասութեան ենթարկուե-
ցին Երուսաղէմի և շրջակայից Ասորի, Խոլտի և Եթովպացի (Հա-
քէշ) եկեղեցականք և եկեղեցելք *): Արդէն Մուհամմէտ Ա. ամի-

(*) Յաջորդ. Պատր. Երուսաղէմի. Բառնաբաս վարդապետի Պանձակե-
ցւոյ. Եր. 29—32. տար. Ա. Պօլիս, 1871 թ.